ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/112 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային տեխնիկայի /արտադպրոցական հաստատություններ/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 26.10.2022թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան
Հարություն Մուշեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.
1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Էս Յե Թրեյդ» ՍՊԸ
3	«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ
4	«ԿՈՄՊՍԵԼ» ՍՊԸ
5	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3"2 «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները				
		«Էյչ Գրուպ» ՍՊԸ	«Էս Յե Թրեյդ» ՍՊԸ	«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ	«ԿՈՄՊՍԵԼ» ՍՊԸ	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ

		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	14 000 000	9 940 000	11 928 000	10 828 755	12 994 506	11 108 055	13 329 666	13 965 000	13 965 000	-	-
2	5 440 000	4 300 800	5 160 960	4 390 400	5 268 480	456 000	547 200	5 376 000	5 376 000	4 480 000	5 376 000
3	1 750 000	1 339 450	1 607 340	1 356 425	1 627 710	1 407 350	1 688 820	1 697 500	1 697 500	-	-

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո ս.թ հոկտեմբերի 27-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.10.2022թ. ժամը 11:00-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի համար ներկայացված են մի քանի ֆիրմային անվանում, այն դեպքում երբ պետք է ներկայացվի կոնկրետ մատակարարվող ապրանքը: Ապրանքը չորս տեսակի ֆիրմային անվանմամբ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է հնարավորության դեպքում հստակեցնել դրանց տեխնիկական բնութագրերը: Անհրաժեշտ է նաև բացառել «կամ համարժեք» բառերը, քանի որ հայտի ներկայացման փուլում ներկայացվում է կոնկրետ ֆիրմայի ապրանք առանց համարժեքության:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են՝

- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /ֆիրմային անվանում, տեխնիկական-բնութագիր/,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր հավելված 1.2 կամ հավելված 1.3-ը,

Ներկայացված մնացած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հավելված 1 Դիմում հայտարաությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ կազմակերպության ռուսերեն անվանումը նշված է հայերեն տարբերակով,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 և 6.2 կետերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 2022թ հոկտեմբերի 31-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 31.10.2022թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է 6.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8.2 «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել 6.2 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.2 կետը՝ «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.052017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, «Էս Յե Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը 1, 2, 3 չափաբաժինների մասով, «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի հայտը 1, 3-րդ չափաբաժինների մասով, «ԿՈՄՊՍԵԼ» ՍՊԸ-ի հայտը 1, 2, 3-րդ չափաբաժինների մասով և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10.Գնահատման արդյունքների մասին

10.1 1-ին և 3-րդ չափաբաժինների համար հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ համակարգով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10"3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմեն Ավետիսյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Հարություն Մուշեղյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար